

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ, Ալլաին փողոց

ՄՈՒԿԱԹՈՒՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԵՄԵՆՈՒՑՈՒՄԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ

Մէկ անգամի համար տողը 3 ՂՐԶ. ողջ.
Մէկ անգամի աւելի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱՃԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՄԵՆՈՒՑՈՒՄԵՐ

Տարեկան ՂՐԶ. ողջ 100
Վեցամսեայ » 55
Եռամսեայ » 30


ՕՏԱՐ ԵՄԵՆՈՒՑՈՒՄԵՐ

Տարեկան ՁՐ. 26
Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒՄ

ՈՒՆԻ ԵՄԵՆՈՒՑՈՒՄԵՐ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽԵՐԵԿՆԱԿԱՆ ԵՄԵՆՈՒՑՈՒՄԵՐ, ՀԻՆԴՆԱԿԱՆ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱՂԵՐՍԻ

Ա. Զ. Դ.

Թերթիս բաժանորդագրութիւնը
Մանսափառ ու կամ փոխանակա-
գրով պէտք է ղրկուին հետեւեալ
հասցէին:

Direction du journal PHAROS

LE CAIRE, Egypte

* *

Թերթիս Աղբաւանդիւնի գործա-
կալութիւնը Տիար Լեոն Նիկաման
ստանձնած ըլլալով, բաժանորդագ-
րութեան և ծանուցման համար դի-
մել իր վաճառատեղին՝ Թէվֆիք
փաշա փողոց:

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԱՂԵՐՍԻ ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Շարունակութիւն Ոսկորի թիւէն),

Մեր յօդուածի սկիզբը գրուած
երկրորդ հարցումը հետեւեալն էր:

«Հիմակուան թաղական խորհուր-
դը Սահմանադրութեան համաձայն
ընտրուած է, թէ ոչ?»

Պետք է խոստովանել թէ այս հար-
ցումին պատասխանը տալ քիչ մը
զոհաւոր է. Նախ՝ անոր համար որ
մէկ կողմը կը պնդէ թէ հիմակուան
թաղ. խորհուրդը 1899 ապրիլին ժո-
ղովրդէն ընտրուած խորհուրդն է, և
միւս կողմը՝ թէ այդ թուականէն ա-
միսներ յետոյ՝ վսեմ. Պօղոս փաշա-
յէ կազմուած մարմինն է:

Երկրորդ՝ անոր համար որ այս
կրկնակի ընտրութեան պարագա-
ներն իրենց բոլոր մանրամասնութիւն-
ներով ծանօթ չեն մեզի, ժամանակին
հրատարակուած չեն և այսօր երկու
կողմն ալ իրարմէ տարբեր կերպով
կը պատմեն զանոնք:

Եւ որովհետեւ մեր հարցումին եւ-
րոպէ արդի թաղական խորհուրդը
1899ի ապրիլին ժողովրդէն ընտրեալ
ըլլալով և կամ չըլլալով պարագային
քննութեան ազմայնուած է, հոս պակ-
մը կ'ընդունինք թէ այժմեան խոր-

հուրդը 1899ի ապրիլին ընտրեալ
խորհուրդն է և ըստ այնմ ձեռք կ'առ-
նենք խնդիրը:

Եւ ճիշդ այս միջոցին մեր աչքին
առջև ունինք ընտրութեան ուղղուած
տպագիր հրաւեր մը, որ 23/4 ապրիլ
1899 թուականը կը կրէ և ստորա-
գրեալ է «Նախագահ ընտրողական
ժողովոյն Աղբաւանդիւնի» Յակոբ Ե-
պիսկոպոս Աշոտ»:

Այս հրաւերը ի մէջ այլոց սա բա-
ռերը կը պարունակէ «1892 Նոյեմ-
բեր 6/18 թուականու վիճակին Աղբ.
վարչութեան Պատկ. Քաղաքական
ժողովոյ որոշմամբ և Եգիպտոսի
Պատկ. Գաւառ. Երեսի. ժողովոյ
վաւերացմամբ ընտրող են...» և ինչ.
Այս տպագիր հրաւերն երկու գլխա-
ւոր դիտողութիւն կը ներշնչէ մեզի,
զորս հարկ է վեր հանել:

Ա. Թաղական խորհուրդին ընտ-
րութեան ձեռնարկուած ժամանակ
ընտրողական ժողովը ընդունած է
Գաւառի քաղաքական և ընդհանուր
ժողովներու իրաւասութիւնն Աղբ-
աւանդիւնի վրայ, տարբեր մեկնու-
թիւն չվերցնել այդ երկու պաշտո-
նական մարմիններուն որոշումները
հրաւիրագրին մէջ յիշատակուած ըլ-
լալով պարագան:

Բ. Յակոբ Եպիսկոպոս Աշոտ, Ե-
գիպտոսի այն ատենուան առաջնոր-
դական Տեղապահը, ստանձնած է
ընտրողական ժողովի նախագահու-
թիւնը:

Թէև Սահմանադրութեան թաղա-
կան խորհուրդներու գլխին մէջ զրծ-
ուած չէ թէ ինչպէս պիտի կազմուին
թաղ. խորհուրդներ ընտրել տալու
պաշտոն ունեցող ընտրողական ժո-
ղովներն, բայց ընդհանուր ժողովի
անդամաց ընտրութեան պահուն կազ-
մուելիք ընտրողական ժողովներու
համար բացորոշապէս տրամադրած
է (Թօղ. 71, հատուած Բ.) թէ ընտ-
րողական ժողովներն պէտք է կազ-
մուին թաղին քաղաքային կամ անոր
բացակայութեան Աւագերիցին նա-
խագահութեան տակ (տե՛ս նաև Սահ-
մանադրական Հրահանգ գաւառաց
համար Գլխ. Ե. Թօղ. 2.) ինչպէս կը
տեսնուի Սահմանադրութիւնը կ'ար-
գիլէ, և շատ մեծ իրաւամբ, Առաջ-
նորդներուն և առաջնորդական Տեղա-

պահներուն նախագահել ընտրողական
ժողովներուն, սա էական նկատու-
մով որ, Առաջնորդներու և առաջ-
նորդական Տեղապահներու նախագա-
հութեան տակ գործող ժողովոց վե-
րապահեալ է ընտրողական ժողովնե-
րու տեղեկագիրներու քննութիւնն ու
վաւերացումը (Սահմ. Թօղ. 81 և 82
Սահմանադրական հրահանգ Գլ. Է.
Թօղ. 6):

Այս տողերէն յետոյ՝ Վաւերաց է
չեղալ թէ առաջնորդական Տեղա-
պահին 1899ին ապրիլի Ընտրողա-
կան ժողովին նախագահելու պարա-
զան ոտն առ ոտն հակառակ է Սահ-
մանադրութեան տրամադրութիւննե-
րուն և իբր այն՝ երբեք ներքի չէ
ընտրողական ժողովի տեղեկագրի
չը գոյութիւնը ջանալ արգարացնել,
անոր նախագահին՝ Տեղապահն եղած
ըլլալու շատ քննադատելի իրողու-
թիւնով:

Մեր գծած անկողնակալութեան
շաւէն հեռացած չըլլալու համար,
ստիպեալ ինք յայտարարելու թէ
տեղեկագրի չգոյութեան պարագան
ծանր հարուած մըն է դատին անոնց՝
որոնք կը պնդեն թէ 1899ի ապրիլի
ընտրութիւններն ամենայն կանոնա-
ւորութեամբ անդի ունեցած են: Դար-
ձեալ դիտել կուտանք թէ Տեղապահն,
իշխանութիւն չունի ինքնին, առան-
ձին կատարուած ընտրութիւններն
հաստատելու կամ մերժելու, այդ
իշխանութեան մասնակից է և Գա-
ւառական վարչութեան քաղաքական
ժողովը, որ սակայն զբաղած չէ այդ
խնդրով ինչպէս կերել երկու կողմի
զրուածներէն:

Եւ ներուի մեզ ըսել թէ Ընտրողա-
կան ժողովն հակասութեան մէջ զըտ-
նուած է, թաղական խորհուրդի ընտ-
րական գործողութեանց սկզբնաւոր-
ութեան ատեն քաղաքական ժողո-
վի իրաւասութիւնն ընդունելով և այդ
գործողութիւններէն վերջը անոր գո-
յութիւնը մոռնալով, իբրեւ իր ըրած-
ները քննելու, հաստատելու կամ մեր-
ժելու իրաւունք ունեցող ձեռնհաս
մարմին:

Այս մոռացումը սակայն Ընտրող-
դական ժողովոյ մէջէն ունեցած են
անոնք ալ, որ այս օր կը մեղադրեն
Գահիրէի վարչութիւնը թէ իր գոյու-
թիւնը զգալի ընել տուած չէ՝ Աղբ-

աւանդիւնի թաղական խորհուրդին
համար, մինչդեռ իրենք ալ այս մա-
սին գլխովին անփոյթ գտնուած են
և այն՝ իրենց համադրմէն ետքը թէ
«ընտրութեանց ատեն զեղծումներ
գործուած և ապօրէն միջոցներ ձեռք
առնուած էին»:

Չը վարուելով այսպէս դէթ մեծա-
զոյն մասամբ կորսնցուցած են իրենց ի-
րաւունքը, այսօր երկուք ուկէս տարիէն
յետոյ, ելլել խնդիր ընելու ընտ-
րութեանց կանոնաւորութիւնը: Շատ
հասկնալի է Տեղապահին չը դիմել-
նին, քանի որ Նորին Գերապատուու-
թիւնը, որ դատող պիտի ըլլար ընտ-
րողական գործողութեանց աւարտու-
մէն յետոյ, եկած, խառնուած, գոր-
ծակցած էր՝ ընտրական գործողու-
թիւններու ատեն, դատելիներուն
մէջ, հետեւեալ ի զուր էր բողոքել
Առաջնորդական Տեղապահ Աշոտ
Սրբազանին, ընտրողական ժողովոյ
նախագահ Աշոտ Սրբազանին դէմ,
որ ընականաբար ամենամեծ պատաս-
խանատուն էր այդ «զեղծումներուն և
ապօրէն միջոցներուն» եթէ երբէք
իրօք տեղի ունեցած էին, բայց հաս-
կանալի չէ և մինչև իսկ մեղադրելի
է քաղաքական ժողովոյ չի գիմեղնին,
որ և մեծապէս կը տկարացնէ իրենց
ապագաման յայտարարութեան ար-
ժէքը, և մենք ալ այս պայմաններուն
մէջ, չենք կրնար ըստ արժանւոյն
գնահատել զայն. մանաւանդ որ «զեղ-
ծումներ և ապօրէն միջոցներ» բա-
ռերը ընդհանուր և առաջնորդական ի-
մաստ մը ունին, որոշ և մասնաւոր
ձեռով մը չի ներկայացուցնում:

Եզրակացնելով ուրեմն մեր դիտո-
ղութիւնները, մեր երրորդ հարցումին
կը պատասխանենք թէ՝

1899 ապրիլին մէջ թաղական խոր-
հուրդը ընտրելու համար կատարուած
գործողութեանց մէջ Սահմանադրու-
թեան ինչ ինչ էական տրամադրու-
թիւնները յարգուած չեն ականեւ կեր-
պով: Ուրիշ տրամադրութիւններն ալ
ինչ կերպով գործադրուած ըլլալու մա-
ղիտ որոշ զաղաքար մը կազմել կարե-
լի եղած չէ զմեզ այն կէս միջութեան
մէջ, ուր կը ձգեն մեզ երկու կողմին
ալ զրաճները:

Իր դիմագծերուն վրայ, միևնույն անհա-

կան են մեշտ: Մօնաբայի իշխանը շարունակ տոմսեր կ'ընդունի այնպիսի մարդոցմ որոնք կուզեն իրեն փոխ դրամ տալ: Բորթուքալի թաղապետը՝ ընդհակառակը՝ միշտ յուսահատական նամակներ կ'ընդունի: Նամակագիրները կը մերժեն իրեն փոխ ստակ տալ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԺԻԱՐՎԵՆ

Պոլիս 16 Սեպտ. — Պ. Պատթի հետ բանակցութիւնները կը շարունակուին: Կառավարութիւնը կուզէ որ Պ. Պատթի բնէ լօրանտօի ժառանգորդներուն որ Բ. Դրան մէջ տոկոսի խնդիրը կարգադրող յանձնախումբին հետ համաձայնին: Թուրքը կուզէ որ տոկոսի խնդիրը նոյն պայմաններով վերջացնէ լօրանտօի ժառանգորդներուն հետ ինչպէս կարգադրեց Պ. Թիւպիսիի հետ այսինքն հարկերէն վեցով: Հաւանական կը թուի թէ այս պայմաններով կարելի պիտի չըլլայ կարգադրել խնդիրը: Եթէ Թիւպիսի ընդունեց հարկերէն վեց տոկոսը, պատճառը այն էր որ իր պահանջը լաւ կերպով երաշխաւորեցաւ: Երանտօի ֆրանսական զեռպանատան՝ մարքատանց վրայ ճէշվաղներ տրուելով: — Ընդհանուր փոխ-հրամանատարը որ Պոլսէն մեկնեցաւ Ֆրանսական մեծ ռազմափորձերուն ներկայ գտնուելու համար, Վիլհէլմայէն ետ վերադարձաւ, որովհետեւ Ֆրանսա իմացուցած էր թուրք կառավարութեան թէ իր զինուորական պատգամաւորը չ'պիտի ընդունուի:

— Նոյն անգին Սեպտ. 17ին կը հեռագրեն. — Կարինէն հասած լուրերը կ'իմացնեն թէ Մուշի մէջ նոր կստորածներ ու աւերումներ տեղի ունեցեր են: Մանրամասնութիւններ կը պակսին: Մեծ տագնապի մէջ է Սաւան: Ֆրանսական զեռպանը արտանց կ'աշխատի պետք եղած տեղեկութիւնները առնելու համար:

— Ֆրանսական Դեռպանը թուրքին դէմ ո'նէ բողոք ունեցող իր բոլոր հպատակները հրաւիրած է որպէսզի պետք եղած վաւերական թղթերով միասին Դեռպանատան յանձնեն իրենց բողոքագիրները:

— Պ. Չէնովիէֆ իր Բարիզ այցելութիւնը եկող ամսուան յետաձգած է:

— Պերլինէն «Բըթի Պէօ»ին կը հեռագրեն:

Մինչ Տունքերը մեծ ընդունելութիւն մը կ'ըլլուէր Չարին, հոռ, Պերլինի մէջ տարաւապետութիւն մընէ որ կը շրջէր:

Չարը մտադրութիւն ունի եղբի հանրապետութեան նախագահը, և, միևնոյն ժամանակ, Վիլհէլմ Բ. Կայսրը մօտերս տեղի

ունենալիք Ռուսական ռազմափորձերուն հրաւիրելու:

Եթէ 1870ի դեպքերը վերիշինք, ո'չ Վիլհէլմ Կայսրը Բարիզ կրնայ երթալ, ո'չ ալ Հանրապետութեան Նախագահը Պերլին: Ուրեմն Չարը զիտաւորութիւն ունի եղբի Ֆրանսայի և Գերմանիոյ միջև հաշտութեան պէս բան մը կարգադրել, երկու վեհապետները Ռուսիոյ հողին վրայ իրարու հանդիպցնելով:

Գերմանական մամուլը բնականաբար հիմակ շատ կ'զբաղի այն հետեւանքներով զորս կրնան ունենալ Չարին դէպի Ֆրանսա ճամբորդութիւնը: Քաղաքական այս կարեւոր դէպքով ամենէն շատ «Նուվելլաթ» տը Համպուրկն է որ կ'զբաղի:

Այս օրաթերթը որ այնքան ատեն Պերլին մարքի պաշտօնական թերթը եղաւ, կը հաստատէ թէ Ֆրանսական զաղթականութեան ընդարձակումը կը զրգուէ նախանձը Անգլիոյ, որ յարմար վայրկեանի մը կ'ըսպասէ այս նոր զաղթականական կայսրութիւնը բանդելու:

«Ահա թէ ինչո՞ւ համար, — կ'ըսէ «Նուվելլաթ» վերջացնելով իր յօդուածը — Ֆրանսո-Ռուս զաշխակցութիւնը, որ Անգլիոյ բնական թշնամին է, շատ մեծ արժէք ունի Ֆրանսայի համար: Եւ որովհետեւ Ռուսիան ալ Ֆրանսային ոչ նուազ պէտք ունի, այս երկու տերութեանց հիմակուան զաշխակցութիւնը, Նաբոլէոնի ժամանակին շատ աւելի ամուր է:»

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

— Շէյնի և Հազարակի և Արապի բաշային ուրիշ շատ մը բարեկամները, ինչպէս նաև իրեն երկու աղաքը Սուէզ գնացեր են Սէյլանի բանտարկեալին դիմաւորելու համար: — Վաքֆներու վարչութիւնը չորեքշաբթի առաւօտ ժողով մը գումարեց ընդ նախագահութեամբ Ն. Վ. Ահմէտ բաշա խայրի, ուր որոշեց որ Վաքֆի մզկիթները փոխանակ ձէթի, կազով լուսավառուին:

Այս բանը երկու ամսուան համար քանի մը մզկիթներու մէջ պիտի փորձուի, և եթէ գոհացուցիչ արդիւնք մուծենայ, Եգիպտոսի բոլոր մզկիթները կազով պիտի լուսավառուին:

Նոր կանգեղներ հաստատուելու համար 3000 Եգիպտական ոսկւոյ ծախք մը պիտի ըլլայ, բայց այս նորութեան շնորհիւ Վաքֆներու վարչութեան ծախքը շատ պիտի նուազի:

Ըլլալիդ, ես ալ միայն ձեզի տեսնելու աւանս իմացայ որ եկեր էք:

Անշուշտ, ուզածին չափ սուտ կրնար խօսիլ, վառնդի աղջիկը բողոքովին զրաւած էր այն յափշտակութեամբ զոր կը պատճառէին իրեն այդ ուրիշ ձայնը որ, պահ ընդ պահ, մանկական ձայնի մը ջիւղ ու դողտը շնչող կ'առնէր, այդ Ֆրանսերէնը այնչափ անգիտաւ, որ լսած ատենը կարելի չէր որ մոռէր անցունէիք այնչափ հոտուն կերպով զայն խօսողին ծագումը:

Ալ ինքզինքը միեակ չէր զգար, ոյժ մը կուգար վրտն այդ մարդուն խօսքերէն, որ, դէպ իր կողմը հակած, կը հաւատարէ իրեն թէ բարեբաղդ էր որ իր զաւակներուն խնամքը իրեն կը յանձնէր, որ իր տանը մէջ ալլաւ վստահ էր ճշմարիտ Ֆրանսուէի մը ներկայութեանը վրայ, որ իր աշակերտուհիներուն իրմէ բան մը, իր աշխուհիներէն, իր խելքէն բան մը պիտի տար:

— Ռուսանիոյ կառավարութիւնը՝ Հէլլեն կառավարութիւնէն խնդրած է որ Եգիպտոսի մէջ գտնուող Ռուսական հպատակները իր պաշտպանութեան տակ առնէ:

Հելլենական կառավարութիւնը հաւանած է ասոր, և պաշտօնական շրջաբերականներ պիտի զրկէ Եգիպտոսի բոլոր Հէլլեն հիւպատոսարաններուն որպէսզի իրենք ալ սաանձնեն նոյն պաշտպանութեան գործը:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌԱԳՐԵՐ

Լոնտոն. 25 Սեպտ. — 1900ի պատերազմը կը ցուցունէ թէ Անգլիոյ տեղագրական պաշտօնականութիւնը շատ յետամնաց է Ռուսականին և ճարտարականին:

Պերլին. 25 Սեպտ. — Շին իշխանը ճշնոյնային ճամբով պիտի մեկնի Հոկտեմբեր 1ին Չինաստանէն ստացած հրամաններուն համաձայն:

Լոնտոն. 26 Սեպտ. — «Տէլի Բրոնիքը»ին Ուաշինգթոնէն կ'իմացնեն թէ Պ. Ռուզուելտ բոլորովին չէզոք դերը մը պիտի պահէ Հարաւային-Աֆրիկէի պատերազմի խնդրին մէջ և պաշտօնական կերպով ո և է Պօէր պատգամաւորութիւն չպիտի ընդունի: Երիւր. 26 Սեպտ. — Յօջիօց մահուան դատապարտուեցաւ:

Պոլիս 26 Սեպտ. — Ն. Բ. Խտիւր և րէկ իրիկուն Սուլթանին հետ ճաշեց Երւտըզի մէջ: Այսօր նաև նստաւ Եգիպտոս երթալու համար:

(ՌԻԻԹԷՐ)

Մարտի. 26 Սեպտ. — Վոյրոն զօրավարը «Ստանիէն» շոգնաւով հոս հասաւ:

Ծովային գործոց նախարարին՝ Պ. Լանրսանի՝ — որ Հանրապետութեան Նախագահը կը ներկայացունէր — ինչպէս նաև զինուորական և քաղաքական իշխանութիւններու կողմէ հանդիսաւորապէս ընդունուեցաւ: Զօրավարը և բանակը որոտրնդոտ ծափահարութիւններով ողջունուեցան: Քաղաքը դրօշազարդուած է:

(ՀԱՎԱՍ)

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Թերթի մամուլի տրուած պահուն Սուէզի մեր թղթակիցը հետեւեալը կը հեռագրէ:

Սուէզ. 28 Սեպտ. Ժամ. 9.30. — Արապի փաշա այս առաւու կանուխ հոս հասաւ: Երկու օր Սուէզ պիտի մնայ:

Պոլսնքը քիչ մը շատ ուղղակի էր, բայց Բրէնսին կեցուածքը այնքան խոնարհօրէն յարգական էր, և անոր հետ միաւորն նայուածքը այնչափ անկողիկ ու բարեհամբոյր, որ Ժերմէն, զեռ միամիտ, իր գեղեցկութեանը անտեղեակ, ատենց մէջ ուրիշ բան չտեսաւ բայց միայն իրական համակրութիւն մը, իր երիտասարդութեան և իր դժբախտութեանց համար զգացուած խորին զիմծութիւն մը:

Հիմայ ինքզինքը կը մեղադրէր իր անխորհրդածու երկիւղներուն համար և կ'ըսէր ինքն իրեն թէ «տղայ էի ինչ էի»:

Ահ, եթէ ուրիշներուն կողմանէ ըլլալիք ընդունելութիւնն ալ ասոր նման պիտի ըլլար, ինչ երջանիկ պիտի ըլլար այդ տանը մէջ... Եւ անձնութեան համակ պէտք մը կը յափշտակէր գիրքը, անսահման ցանկութիւն մը պաշտօնը լաւ կատա-

ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ԱՐԺԼԹՈՒՂԹԻՔ

Աղեքսանդրիա, 20 սեպտ.

Բրիգիէթիէ	100	/—
Իւնիֆիէ	107	1/4
Տալիւրա Սանիլ	103	/—
Տօմանեալ	104	/—
Թրքական Գոնսօլիաէ, սեռի Օ	26	93
Բուսէլի Երկաթուղի . . . ֆր.	102	/
Քանալ տը Սիւէզ	» 3715	/—
Քանալ տը Սիւէզ օպլիկ	» 640	/—
Նաշ. պանք օֆ Եգիպթ Ա. Ռ.	11	5/16
Աղեքս. Թրամիլէյ (բրիգի.) ֆր.	50	/
Աղեքսանդրիոյ Թրամիլէյ (աքսիօն տիվիտանա)	» 29	1/2
Քրէտի ֆօնտիէ եղ. աքսիօն	» 512	/—
Քրէտի ֆօնտիէ 3 0/0	» 264	1/2
Ջրի Ընկ. Գահիթէ	» 652	1/2
» Աղեքսանդրիա Ա. Ռ.	35	7/8
» Թանթա	» 12	/—
Պէհէրայի անանուս ընկ.	» 48	/—
Իճիւլլէն մարքէթս օպլ. 5 0/0	» 100	/—
» » աքսիօն	» 0. 14.	9
» սօլթ ընտ սօտա	» 0. 15.	9
Նուսկովիչ Օթէլա	» 4.	/—

ԲԱՄՊԱԿ ԵՒ ԱՐՄՏԻՔ

ՔՕՆԴՐԱ

Աղեքսանդրիա, 20 սեպտ.

Բամպակ. Նոյ. Թալր. 9	27/32	—	/—
» Յունիլ. » 9	7/8	—	/
» Մարտ » 10	1/32	—	/—
Պրիդէ. Նոյ. Դեկ. Յուն. Լըուշ	63	1/2	—
» Ժեռ. մարտ » 63	35/40	—	/—
Բակլա. սեպ. հոկտ. » 90	1/2	—	/—
» Նոյ. դեկ. յիլ. » 93	/	—	/—

ՔՐԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԴԵՂԱՐԱՆ

Ժ. ՏԵՐԼԻՔ

ԳԱՀԻՐԷ — ԷԶՊԷՔԻՏԷ

Պ. Ժ. Տերլիք պատիւ ունի ծանուցանել իր յարգող յաճախորդներուն թէ այսուհետեւ իր գեղարար բաց պիտի մնայ գիշերներն ալ մինչև առաւօտ:

Գիշերային սպասարկութիւնը պիտի կատարուի ի ձեռն վկայեալ գեղազորի մը:

1—10

ՀԱՅԱԿԱՆ ՆՈՐ ՍՐՃԱՐԱՆ

ԷՐՃԻԱՍ

Գաւիթէ, Աքապիս-Խաթա

ԽԱՐՆ ԴԱՏԱՐԱՆԵՐՈՒ ՃԵՐԻ ԴԻՄԱՑ

Գահիթի ամենէն կեդրոնական մէկ կէտին վրայ հաստատուած այս նոր սրճարանը կը յանձնարարուի իր մաքրութեան, կարգապահութեան, սպասարկութեան, կանոնաւորութեան և ըմպելիներու առաջնակարգ յատկութեանը համար:

1—2

բերու, և վար չմնալու այն զգացումներէն չոր ներշնչել կը կարծէր:

— Բայց ալիկ միտքս եկա՛ւ, գոչեց Բրէնսը. անշուշտ նախաճաշ ըրած չէք, Օրիորդ: Պարտաւորուեցաւ խոստովանիլ թէ արդարեւ բոլորովին մոռցած էր այդ մանրամասնութիւնը:

Այն ատեն ճշմարիտ ցաւ մ'ըզաց, հրմշակելով ծառան կշտամբանօք: զայրաջած թէ ինչո՞ւ աւելի առաջ դատարարուհին իր սենեակը չէին տարած, և իր սենեակին մէջ պէտք եղած սպասը չէին մատուցած: Բայց երբ սպասուհին, հարցապնդումներէ հալածուած, կ'աճապարէր իր հրամանները կատարելու, միտքը փոխեց:

— Պէտք չէ, Ուարտա, Օրիորդ մօրքովը կը տանիմ. և, Ժերմէնի զստալով «Գիտէք կարգուսարքի բոլորովին հակառակ է աս... բայց ապահով եմ որ ինծի կը ներէ...»:

(Շարունակելի) Թաքսի. Ժ. ՍԵԹԵԱՆ

ւասարկութիւնը կը նշմարուէր. աչքերը անշարժ եղած ատեննին: Կնոջ նայուածքի մը զգուշացում ունէին, թաւալակուող աչքեր, մետաքսածուփ և երկար թարթիչներով, շատ լըթագոյն. շքեղ ակոսներով բաւորազեղ շրթերէնները իր անտիկեղ առողջութիւնը կը պատմէին. քաջաթուի և շատ ալ բարակ մազեր, զոր թեթեւ ալեծածանում մը մեր կ'առնէր, գեղեցիկ իմէ կը պսակէին լայն, քիչ մը գմբէթաւոր ճակատը, կամեցող ճակատ մը որ, ուղղագիծ և լայնառունգն քրթին հետ՝ ամբողջովին կը սրբագրէին քիչ մը թուլիկ այդ դէմքը և բաւականաչափ առնական նկարագիր մը կուտային անոր:

Անմիջապէս, ուզեց հաճելի ըլլալ Ժերմէնին, զրեթէ խոնարհ կերպ մը առաւ և անոր հարցուց:

— Ինչո՞ւ, օրիորդ, հոս թողուցեր են ձեզի. հանրմը, հաւատացեք, չգիտէ հոս

Մ Ո Ւ Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ֆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐԻԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԼՍՍՑՍՑՍՑՍ 1843 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱԶԱՐ ՅՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւնները կը գո ծադի. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւ այլն

ՄՈՒԶՈՒԱԼ ԼԱՅՖԻ սակագինը և ապահովագրութեան զանազան դրուբիւնները չուսումնասիրած մի՛ ապահովագրութիւն. — Առատածեղն պայմաններ
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼԺԻՇ, Ընդհ. ներկայացուցիչք:
Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր զործակաւոր: Գ. ԵԿԱՒՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՅՐԱՆԲ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ԳԵԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԷ ԲՈՒՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷՆ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:
Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր անագներու վրայ:
Ֆրանսայի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:
Կը գանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:
Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաւ ամսով մուրհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻԶԵԻ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԿԻՈՅ ԳԻԾ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիւրա, Իզմիր, Միսիլի և Կ. Պօլս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաւները Բիւրա հանգիպելուն, Աթէնք այցելել:

ՄՈՒՐԻՈՅ ԳԻԾ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոս-Սայիտ, Եսփա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնտէրուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Զորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տասնըհինգ օրը անգամ մը՝ երթեկի կարմիր

Ծովու հետեւալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՆ, ՀՅՏԷՍՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանաջ համար դիմել Ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բոս-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուլի ամեն մամանակը:
1—1902

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՑԻ ԵՒ ԳՈԶԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, Մոսկի փողոց,

Ս. ԵՒ Ս. ՍԻՅԱՆՈՒԻ ՎԱՃԱՌԱՑԱՆ ԴԵՆՐ

Ապրանաջ զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւարածոյ Ամերիկեան և Ֆրանսական Շնոհրաֆներու

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:

ԱՅՑԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈԶ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ԱՐՄԱՐ
ՍԵՑՍԵ
ԲԱՐԻՋ
1900
ԱՐԱՆՑ
ԿՐԵՆԵՐՈՒ
ԵՒ
ՏՂԱՅՈՑ ՉԱՄԱՐ
ՀԱՆԴԵՐՁՆԵՐ
ԸՍՏ ՎԵՐՁԻ ՆՈՐԱՅԵՒՈՒԹԵԱՆ
ԶԱՓԱՌՐ ԵՒ ՈՐՈՇԵԱՒ. ԳԻՆԵՐ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խաիվական Հրամանագրով

25 Յունվար 1898

Դրամագրութիւն Անգլ. ոսկի 1,500,000

Պահեստի դրամ " " 193,000

Կառավարէ. Սըր Էլվին Բալմէր.


Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր. Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի անագներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՄԷՋ

Կը տպուին ամեն լեզուէ հարսանեկան հրաւիրագրեր, Տեղեկագրեր, Նաւակագրութիւնք, Գրքեր, Տոմար, Հաշուացոյցեր, Մահազրէր Յայտարարութիւններ, և այլն, և այլն:
ԱժԱՆ ԳՆԵՐՈՎ



ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈԽՈՎ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ

50 % ԿԱՆԻՏԻ ՎՃԱՐԵԼՈՎ

ԱՌԻՍՏԱՆԱՐԶԱՏՈՒՆ

ՍԷՏԷՖՃԵԱՆ

ՀԻՄՆԵԱԼ Ի Կ. ՊՕԼԻՍ 1882 թ

ՓՈԽԱՐԵԱԼ Ի ԳԱՀԻՐԷ 1898 թ

ԱԹԱՊԱ - ԷԼ - ԽԱՏՐԱ — ՊԱԶԱՐ-ՄՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ լուսանկարատան մէջ շատ խնամեալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն մեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կոռույներ և ակրան-սիւրմաններ:

Դուրսը առնուելիք լուսանկարներու համար դիւրաւ մատչելի պայմաններ:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՇԱԿ

ԳԻՆԵՐՈՒ ԶԱՓԱՌՐՈՒԹԻՒՆ

ՔԻՆՏԸԼ ԵՒ ՍԻՍՏԸՍ

Հաստատեալ յամին 1860

ՀԱՅԱԳՈՐԾԷ-ՀԱՅԹԱՅԹԻՉԷ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուռին մէջ կը պատրաստուին ամեն տեսակ հացեր, պիւրիւններ, եւ քէյլեր:

Այս փուռին մասնաւոր կառքեր կը շրջադադրին Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաև Զէյթուն և ի Հէլսան:

Թէվֆիգիյէ, Պուլաքի ճամբայ. ԳԱՀԻՐԷ

Թէլէֆօն թիւ 304.